ՔՆՆԵՐԵՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԵՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Դոկտոր Կ. Յ. Փաշայեան—խան Ընդարձակ Դպրոցական Առողջապահութիւն
Ալէքսանդրիա, 1906 թ.։

Այս լուրջ ձեռնարկութիւնը այժմ վերջացած է տպագրութեամբ և մեր աղքատիկ գրականութեան մէջ կարող ենք մատնացոյց անել իսկապէս հմուտ և գիտական պատրաստութեամբ կազմուած մի աշխատանք, որ պէտք է դառնայ անհրաժեշտ իւրաքանչիւր դպրոցական գրադարանում և սեղանի գիրք լինի աշակերտների դաստիարակութեամբ պարապող իւրաքանչիւր հայի համար։

Նիւթերը դասաւորուած են հետևեալ մասերում. 1) Դպրոցական միջավայր. շէնքը, դասարաններ, նստարաններ, օդաւորում, լուսաւորում և այլն. 2) Ուսումնական միջավայր. մտքի յոգնածութիւն, ուսուցման մեթոդ, քննութիւն, կարգապահութիւն, մարմնավարժութիւն և այլն. 3) Անհատական առողջապահիկ պայմաններ. քուն, մաքրութիւն, հանգիստ սընունդ և այլն. 4) Դպրոցական հիւանդութիւններ և 5) վարակիչ հիւանդութիւններ. նախազգուշական միջոցներ, համաճարակներ, բժշկական հսկողութիւն և այլն. 6) Դպրոցական արկածների եւ անհանգստութեան նախնական դարմանները. շնչեղձութիւն, ճմլումներ, ջղացնցումներ, թունաւորում, արևահարութիւն, ջերմ և այլն 7) ուսուցիչների առողջապահութիւնը։

Այդ ճոխ, համապարունակ բովանդակութիւնը բռնում է 653 էջ. Գրքի մէջ կան բազմաթիւ նկարներ, որոնք դիւրացնում են ըմբռնել ընթերցանութիւնը։ Տպագրութիւնը և թուղթը շքեղ։ Այդ օգտակար գիրքը բաժանորդագրութեամբ արժէ 2 բուբլի, իսկ տպագրուելուց յետոյ կրկնապատիկը։

Հեղինակի հասցէն. Египетъ, le D-r Pachayan Khan, Alexandrie, Egypte։